



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ. փոստ kotayk@mta.gov.am

-----N-----

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ղ Ե Ր Ձ «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳ» ԵՎ «ՎԵՐՋԻՆ ԴԱՍ» ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ շրջանավարտներ

Ջերմորեն շնորհավորում եմ դպրոցական ուսումնառության ողջ գործընթացում առանցքային կարևորություն ունեցող «Վերջին զանգ» և «Վերջին դաս» հանդիսությունների կապակցությամբ:

Թո՛ղ որ, այս հիասքանչ օրն իրավամբ դառնա Ձեր կենսագրության ամենահիշարժան և ամենախորհրդավոր էջերից մեկը:

Խորհրդանշական զանգի տոնական դղանջները միաժամանակ ավետում են Ձեր հասունության սկիզբն ու նոր կյանքի մեկնարկը, որտեղ մուտք եք գործելու հարազատ կրթօջախներում ստացած համակողմանի գիտելիքներով և սիրելի ուսուցիչների իմաստուն պատգամներով:

Վստահ եմ, որ նորօրյա սերունդն իր հայրենապաշտությամբ և պահանջատիրությամբ ակնառու ներդրում է ունենալու մեր ազգի գալիք հաղթանակներում:

Իմ շնորհավորանքներն են հղում նաև մեր հարգարժան մանկավարժներին, ովքեր այսօր վայելում են անմնացորդ նվիրումով կատարած աշխատանքի արդյունքն ու արժանանում իրենց սաների երախտագիտությանը:

Ուսումնական տարվա ավարտն ազդարարող այս տոնական օրվա շրջանակներում պետք է կրկին ընդգծենք կրթության բնագավառում իրականացվող պետական քաղաքականության առանցքային դրսևորումներն ու փաստենք, որ այդ ամենի արդյունքում ոլորտում շարունակաբար գրանցվում են նոր ու դրական զարգացումներ:

Թանկագի՛ն շրջանավարտներ

Բարեմաղթում եմ անսպառ եռանդ, անկոտրում կամք ու նպատակասլացություն:

Շնորհավորում եմ նաև Ձեր ծնողներին ու ցանկանում, որ իրականություն դառնան իրենց զավակների հետ կապված բոլոր իղձերն ու նվիրական երազանքները:

Հարգանքներով

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ